

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՆԱՐԻԱ

Տարեկան 12 փ.
Տեղամասայ 6 «

ՍՐՏԱՍԱՀՄԱՆ

2 քիւ մեկ ծրարով
Տարեկան 14 փ.
Տեղամասայ 7 փ.

ՍՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տո.
Տեղամասայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

—o—

Մանուկանի տղր
20 ամսիմ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iraivounk“

VARN A (Bulgarie)

—o—

Редакция


на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Грнрпнлс ևս
չնն տրнлр



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

2Ի ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒՆ

Մեր բաժանորդներն ա-
նոնք որ ցարդ չեն հաճ
իրենց անց-
եալ տարւոյ հաշիւը մաքրել, թող փո-
թան մինչև փետրուար 15 պարտ-
քերն ինքն ինքն վճարեն: Եթէ այս անգամ ալ
թերանան, այնպիսիք իրաւունք
չը պիտի ունենան ո՛ր եւ է առարկու-
թիւն ընելու, երբ իրենց անուն-
ները մի առ մի հրատարակենք իբր
անպարտաճանաչ եւ ազգային թերթի
մը զրամը իւրացնողներ:

Եթէ բաժնեգիրն վճարել չեն ուզեր
թերթը պէտք է մերժեն: Եթէ թերթը
կը մերժեն պէտք է պարտքերն ալ
միաժամանակ զրկեն: Թերթի մը ան-
ընդհատ հրատարակութիւնը ծանր աշ-
խատութիւն է զատ ահագին ծախքի կը
կարօտի: Իսկ այդ ծախքին զրամը
միայն բաժնեգիրներով է որ կը հա-
յարթուի: Իրաւունք չը գիշանի որ երբ
միջոցներու գիծել ինքզինք ապրեցնե-
լու համար:

Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Վեց տարին երէ ի վեր անհովիւ
մնացած Կիլիկիոյ ընդարձակ վի-
ճակը այսօր այն անստոյգ կացու-
թեան մէջ կը գտնուի, ուր կը
գտնուէր իր վերջին կաթողիկոսին
վախճանելուն հետեւեալ օրը:

Երէցեան Սրբազանը այլ եւս
վերջնականապէս հրաժարած է.
ոչ ընտրողաց ձայնը, ոչ Պատ.
րիարքարանի պնդումները և ոչ ալ
Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկո-
սին յորդորական կոնգակը ազդե-
ցութիւն ըրին իր յամառ կամքին
վրայ:

Հոգեւոյս Գրիգորիս եպիսկոպոս
Ալեքսանդրի ընտրութենէն ու այդ
ընտրութեան այնչափ ազդակի
բեկանումէն վերջ, որ Դրան և Օր.
մանեանի կամայականութեանց ար.
գիւնքն էր, տարին երեք ընթաց-
քին մէջ կառավարութեան և Պատ.
րիարքարանի միջև երկար բա-
նակցութիւններ կատարուեցան,
կրօն. և ֆաղ. Ժողովներու մէջ
կառու հոգեւոր ծագեցան, ընտ
րելեաց ցանկը Դրան ներկայացու-
նել ու չի ներկայացնելու համար
ահագին աղմուկներ ելան, իսկ

պահան Սրբազան չորս անգամ
եւ ուսողէմէն Կիլիկիոյ հեռու.
րութիւնը չափեց, թեմիսը պատ-
շախտեց իր անհրաժեշտ և անհա-
նապատային կեանքը ապրեցան
և մանաւանդ այս բոլորի համար
կարեւոր գումարներ ծախսուեցան.
այս ամենի արդիւնքը վիշտաւորի
մը «չ կարեմ» ովք օգր ցնդեցաւ:
Իսկ անդին հարիւր հազար տո-
րազայինք իրենց ներկայ տառա-
պաղին որբերուն մէջ հոգիւ որ պիտի
մը վերին պաշտպանութիւնէն զուրկ
վանքեր, եկեղեցիներ և ազգային
կալուածներ ու հաստատութիւններ
օտարին ոտնձգութիւններուն են.
ժակայ մնացին, դեռ պրտի մնան,
ով ինչ գիտէ ո՛րչափ ատեն:

Երէցեան Սրբազանի բարեմաս-
թիւնները ինչ որ ալ եղած լինին,
ցարդ իր վարած պաշտօններուն
մէջ որ աստիճան ալ խղճամիտ
գտնուած ըլլայ, չէ կարելի ներել
իրեն այս վերջին փախուստին հա-
մար:

Յարդ մեր իմացածը սա է թէ
իր ներսէն տրամադրութիւններ չեն
բղիւր եղեր այդ կարեւոր պաշ-
տօնը ընդունելու:

Այս առարկութիւնը երկու գծե-
րով կրնայ մեկնուիլ.

Ա. Այն է թէ Երէցեան եպիս-
կոպոս Կիլիկիոյ վիճակին գործերը
կարգադրելու գէժ խոչնդոտներ կը
տեսնէ կառավարութեան կողմէ
յարուցուելիք, և ասոնց գիմադ-
րելու անկարող կը զգայ ինքզինք:

Բ. Ինք չուզեր Պոլսոյ կամ Ա-
ւետեաց Երկրին բազմակողմանի
հաճոյքներ ունեցող կենցաղը փո-
խել Կիլիկիոյ վանական ու նուազ
հաճոյալի կեանքին հետ. մանա-
ւանդ երբ կը մտածէ թէ Յարու-
թիւն Պատրիարքի լցեալ օրերը
օր մը առիթ պիտի տան իրեն
Սուրբ Յովովբայ աթոռին վրայ
բազմելու, մինչդեռ երբ Սիսի կա-
թողիկոսութիւնը ընդունի այդ ա-
ռիթը իրեն համար իսպառ կոր-
սուած կըլլայ:

Չէք գիտեր այս գիծերուն ա-
ռաջինը թէ երկրորդը, կամ եր-
կուրը մէկէն առիթ կուտան Գիւր.
Երէցեանի բացասական պատաս-
խանին: Ասոնց որն որ ալ ըլլայ

չէ կարող զինք դասալիք մը նը.
կատելու անհաճոյ վճռէն մեզ հտ
կիցնել:

Եթէ կառավարութեան յարու-
ցանելիք գծուարութիւնները նա
խատեսելով կը հրաժարի. իր ուխ-
տին գէժ կը մեղսէ, քանի որ ե.
կեղեցական սքեմը իր ուսին առած
օրէն երգուած է իր անձը ու հան.
գիտեղ զոհել հօտին պաշտպանու-
թեանը և անոր օգտին համար.
մանաւանդ թէ իրմէ աւելի կա-
րողիւր չի կան այդ պաշտօնին,
եթէ կան ալ, անոնց ընտրու-
թիւնը արգելի տակ է:

Իսկ եթէ իր հաղթանք չի վրը.
գող յու կամ հաճոյսից կեանքէ
մը չի հրաժարելու համար է որ
Սոյ կ'սթողիկոս ըլլալ չուզեր.
ատով աւելի դատապարտելի է և
աւելի ուխտագրուծ:

Կը ցաւինք որ Գիւր Երէցեան
իր անդառնալի հրաժարականովը
թէ՛ Կիլիկիոյ ազգային վիճակին
չփոթութեանը երկարաձգում կը
պատճառէ և թէ իր երկար տա-
րին երու մէջ չինս ճ համբաւը ու
չուհած համակրանքը մէկ հարուա-
ծով կոչնչացնէ:

«Հովիւ բ՛լ զանձն իւր զնէ
ի վերայ ոչ խարաց»

Մեծ Նազովրեցիի իր առաք-
եալներուն տուած այս պատուե-
րին հակառակ վարուող եկեղե-
ցական մը չենք կարծել որ օր մը
յարմարագոյն նկատուի անոնց մի-
ոյն Աթոռին վրայ բազմելու տը-
ծանաւորապէս:

Գուրպէր

ԱՆԴՐԱՆԻԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ս. Առաքելոց վանքի վանահօր
բացակայութեան միջոցին, 20
դեկտեմբեր 1901, Աղբաւիկի
խումբը գրուեց վանքը, ուր 50
որբեր և 30 այր կամ կին պաշտօն
եաներ կային: Խումբը 35 մարդէ
կը բաղկանար: Հաստատուած է
թէ գրաւման ամբողջ միջոցին որ
19 օր տեւած է, խումբը վանքին
և եկեղեցւոյն գոյքերուն չ' զնա-
սած. բայց բոլորին սնունդը ա-

պահովելու համար վանքէն եօթը
կով մորթել տուած և ալիւրը տրա-
մագրելի ըրած է:

Չորաբաժնի հրամատար Ահմէտ
Ալի բաշան՝ 1200 մարդէ բաղ
կացեալ երկու ջոկատով, պաշա-
րեց վանքը և կտրեց բոլոր ելքե-
րը:

Բանակցութեան համար ձեռք
առնուած շատ մը անօգուտ մի-
ջոցներէն, երեք անգամ վանահօր
գիմումներէն և իր կամ խօսքով
վրդ. Պէհլիկեանի կողմէ վեց նա.
մականք զրկուելէն վերջ, այս վեր-
ջինը իր կեանքը վտանգի տակ
գնելով, դիմեմբեր 1ին վանքին
մէջ մտաւ երկու թուրք ոստի-
կանական պաշտօնեայի և քանի
մը ուրիշ անձերու հետ:

Վարդապետը և իր հետեւորդ-
ները նախ փակուեցան, յետոյ
Աղբաւիկը անոնց ներկայացաւ
Մէհմետիէի պատուանշանը կտրծ-
քը, զոր խալիլ Պէշէրէն (*) տուած
էր զանի սպաննելով:

Աղբաւիկ յայտարարեց՝
1. Թէ ինք և իր խումբը ա-
պստամբներ չեն, ալ կը պաշտ-
պանեն իրենց ու իրենց հայրենաժ
կիցներուն կեանքը ֆիւրտերուն
դէմ:

2. Թէ իրենք ոչ մէկ գիւղ ա-
ւարի չեն տուած, ուսհաղակներ
չեն զարկած ու անձն սս մարդիկ
չեն սպաննած:

3. Թէ իրենք սպաննած են իսա-
ղիլ Պէշէրէ և ուրիշ երեք ֆիւր-
տեր, որոնք Շուշաւերիկի կոտորա-
ծին հեղինակներն են:

4. Թէ՛ ընդհակառակը—ֆիւր-
տերը անհամար աւարառութիւն-
ներ, բռնաբարութիւններ, սպանու-
թիւններ և ջարդեր գործած են
թէ՛ Մուշի և թէ Սասունի գիւ-
ղերուն մէջ:

5. Թէ՛ իրենք Սուլթանի իշ-
խանութիւնը կը ճանչնան, բայց
մէկ Սուլթանը կը բաւէ և չեն
ուզեր երբէք որ ֆիւրտ պետիւն ալ
սուլթաններու չափ հայոց կեան-
քին ու ինչքին վրայ իրաւասու-

(*) Խալիլ Պէշէրէ Հիւսնիկի, Սրա-
զանքի (200 մեռել) և Շուշաւերիկի
ջարդերուն հեղինակն է:

Թիւններ ունենան, տուրքեր հաւաքեն իրենց հաշուին համար և իրենց ուզած կերպով օրէնքներ դնեն:

6. Թէ՛ իրենք կը յանձնուին եթէ իրենց ու երկրին հայերուն ապահովութիւնը երաշխաւորուի: (*)

Այն ատեն Պէհլուի վարդապետ վանքէն մեկնելով Մուշ վերադարձաւ, կուսակալին, գինուորական հրամանատարին և Սիւրբ-Պետրոսի հիւպատոսներուն հաղորդեց Սիւրբ-Պետրոսի յայտարարութիւնները, զորս հիւպատոսները բնորոշակեցին տեղեկագրի մը մէջ:

Թուրք կոստովարութիւնը մինչ երկրորդ պատուարկութիւն մըն ալ պիտի գրկէր, Գոյնմար Գիւսուսունը երբ իմացուցաւ թէ ամբողջ խումբը վանքէն հեռացած է Նախադ գիշերը: Անգղանիկ երկու ընկերները պաշարման առանձնապէս էին: Թուրք գիւնուորներէն ալ 2 սպանուած, 2 վիրաւորուած:

Կինթաքուի թէ Արգանիկը Սասունի լեռները քաշուած ըլլայ: Գաւիւրուած
Բթո Արմենիայ,
25 Յունվար 1902

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄԱՆԻՆ ՄԷՋ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱՆԵՐՈՒ ՎՐԱՅ
1902 Յունվար 20ի հարցապնդումը

(Վիճարանութեանց ամբողջական տեղեկագիրը հրատարակելով, մեր շնորհապարտութիւնը կը յայտնենք Մ. Մ. Կիւսպալ Ռուսէյի ու Տընի Գոշէյի, ու կը ճանչնանք թէ ալտաքին գործերու Պ. Նախարարը, օգտակար յանձնառութեանց բացակայութեանը առիւթ, մարդկութեան բռնութիւնը լսե-

(*) Անգղանիկի այս խոսքը «Հայ-րենիք»-ի խմբագիր Պր. Վառման սապէս կաղաւաղէ «Ինձ տուած իրաւանքները կարգիլն ինձի անձնատու ըլլալու» եւ այս դրամամբ շինուած սուսան վրայ յենելով, կը յաւելու Պր. Վառման. «Այս սպարդակն պատասխանը կը բաւէ ապացուցանելու, որ Նախ Անգղանիկ եւ իր ընկերները որոշ ծրագրի մը համեմատ կը գործեն եւ որոշ պատասխանատուութեան(?) տակ եւ հանդէպ իրենց միւս ընկերներուն: Երկրորդ՝ Անգլանիկը իր ետեւը ուժ կը զգայ: Այս խոսքով ալ Պր. Վառման ըսելու իր ընթերցողները հաւատարմեան կուգէ թէ՛ Անգղանիկ Հ. Յեղ. Դաշնակցութեան հրահանգներովը կը շարժի եւ անոր առջեւ պատասխանատու է: Այժմ Պր. Վառմանի կը մնայ լամ Բրո Արմենիայի ստոյգ ազդեցիկ առած Անգլանիկի յայտարարութեան վաւերացումը սուտ է ըսել, որ չէ կարելի քանի որ անգլիական եւ ուսական հիւպատոսները պաշտօնապէս արձանագրած են, եւ կամ խոստովանել թէ իր գրածը սուտ է, եւ հետեւաբար անկէ հանել շահագրգիռ սեւեռութիւններն ալ սուտին սուտն են:

Դիւ. «Իրաւունք»

ցուց, ու օրինաւոր ամօթխածութեամբ մը խոյս տուաւ Համիդի «անուանելի մարդուն» անունը արտասանելէ: (Բրո Արմենիա):

Մ. Կիւսպալ Ռուսէյ. — Խորհրդարանէն կը խնդրեմ իր քաղաքացիներէն զոքոքեալ մը վարկեաններ ինձ նուիրել որպէս զի մարդ կատարեալ ազատութեամբ իրեն ներկայացնելու իր հակիրճ գիտողութիւններն կարենան ընդլայնել (խօսեցեմք, խօսեցեմք):

Ո. Նախ եւ առջ ներողութիւն կը խնդրեմ վիճարանութեան ուշ ժամու մէջ գալուն: Մինչ ամեն պատիւ ունեցայ հարցապնդում ինչպիսիք մը ըսել, Թուրքիոյ թուրքիոյ նկատմամբ բերութիւնները կը խզուէին: Սակայն մեր ներկայացուցչին կողմէ խմբագրուած պահանջներու նկատմամբ արեւած ըլլալով, ոչինչ նախատեսել կուտար որ արտաքին գործերու Պ. Նախարարը, անոնց ուժ տալու համար, թրքական ջորիները, նաւարարները մը զրկելու կէտին վրայ ըլլար: Կարելի չէր այն ատեն նախատեսել թէ կառավարութիւնը խորհէր, պահանջումը մը գանձումին համար, բռնադատելու պաշտօն ունեցող մարդոց փոխել մեր պատերազմի նաւատարմին զբաւանաւոր ու նաւատարները, որոնք ընդհանուրին մարին մէջ, աղքատի աւելի բարձր գործերու կատարումին սահմանուած են: (Շատ լաւ, շատ լաւ):

Հանրային կարծիքին վրայ մեր նաւատարմին մեկնելուն ձգած յուշումը իր արձագանգը ունեցաւ այս փոքր վոյն մէջ, որ անմիջապէս Մ. Սամպալի հարցապնդումին վիճարանութիւնը ուղեց: Այն ատեն չը պահանջեցինք որ իմ անմիջապէս վիճարանութեան եւ թարգման, վասն զի կը կարծէի, կը յուսայի թէ — ու այդ սովոր պատրաստ կը վկայէ թէ այս վիճարանութեան մէջ կասկածաբար կամ ըզրկեմութեան ոչ մէկ սխալման կարգի թաղ կը բերեմ — կը յուսայի, զրեմ, թէ Պառ. Պ. Տէլքաւէի, Կոնստանդինոպոլի միջոցներու գլխավոր հարկադրող զանազան շարժառիթներուն մէջ, Հայկական դատարանները կացութիւնը կառավարութեան մտքին վրայ իր ազդեցութեան մասը ունեցած էր: Նոյնիսկ, իբր պատասխան Մ. Կոշէյի, Նախարարին բեմը բերած բացատրութիւններէն ետք, յարատեւեցին կարծեղութեան թէ կառավարութեան խի մը կէտերու վրայ պահած լուծութիւնը խոհեմ վերապահութիւն մըն էր, ու հայերու պաշտպանութիւնը իր վերջնական որոշումներէն դուրս չէր:

Կաւեցնեմ թէ վաշտակաւ կողմէ արտասանուած քանի մը բառերը, երբ խորհրդարանին պահանջեց Սամպալ օրակարգին մերժումը, արտաքին գործերու նախարարին լիզուին մասին իմ լատես սեկնագրանութեան մէջ զիս հաստատեցին:

Իր սովորական ճշգրտութեամբ որ իր յայտարարութեանց փոքրագոյնին այնքան ուժ կուտայ, վարչապետը մեզ այն ատեն ըսաւ. «Ինչպէս դաժնեմ մեր քաղաքակրթներուն նիւթական շահերը զոհել տալու միտք չունի, նոյնպէս իր նախադրմանց ստաճին շարքին մէջ կը գնէ, բարոյական շահերու ամբողջ ստացումը մը, զոր նուազեցնելու թոյլ պիտի չը տայ»:

Ինձ անկաւելի կը թուէր որ Պ. Նախարարապետը, այսպիսի յստակ կերպով իր միտքը արտայայտելով, խղճատանքին մէջ համարած ըլլայ թէ բովանդակ փողովուրդը մը գոյութեան պահպանումը, որ կը գտնուի այնպիսի զանազանութեան պաշտպանութեան

թեանը ներքեւ, որոնց տակ Թրանս-սան իր ստորագրութիւնը դրած է, այս երկրին բարոյական պարտաւորեանց թուէն եզոռի ու սպասեցի:

Այդ յայտարարութիւններէն ի վեր, որոնց մէջ խոստում մը ընդշնարել կը կարծէի, մեր նաւատարմը եւս կանչուեցաւ: Կէս-պաշտօնական ծանուցադրեր, այդ անսակ պաշտօնական յայտարարութեանց սովորական ոճով մը խմբագրուած, մեզ իմացուցին թէ Թրանսան Սուլթանէն ընդունած էր պահանջուած բոլոր գոհացումները: Տեղ մը չը տեսայ որ Մ. Տէլքաւէի Հայերուն ինչպիսի որ եւ է լաւ մը պայմանագրած ըլլայ ու մեր Պոլսական ներկայացուցչին կողմէ որ եւ է գիտեմք մը փոքրեւոր ըլլայ սոսկեւ առանց համար այն սպանութեանց ու սխալման թաղանթներուն որոնց Հայերը մասնաւոր են անձնապէս պատասխանատու Սուլթանին կամքովը: Վասն զի Հայաստանի մէջ գործող բոլոր ոճիւրները հրամայողը ան է: (Միջախառնութիւններ ձախ կողմը):

Դեպի գրքի մը հրատարակութիւնը իմացուցած էին, զոր տեսակ մը անհամբերութեամբ կապուէինք: Այդ հրատարակութիւնը տեղի չունեցաւ:

Արտաքին գործերու Պ. Նախարարին կողմէ հարցուելու ինչպէս այս լուծութիւնը կամ մտացումը: Կը խնդրեմ իրմէ նաեւ որ բացառապէս ու ամենուն հակառակ լիզուով մը իր 4 նոյնիսկի յայտարարութիւնները ամբողջացնել հաճի:

Թող թեղ ըսէ թէ, այս կամ ոչ, հայերուն Ապտալ-Համիդի մեթոտական բնաջնջումին թողութիւնը, քաղաքակրթութեան ու մարդկութեան դէմ այսքան ոճիւր գործադրող արիւնջարութիւն անպատեթիւնը բարոյական շահերու ինչքին լքում մը չէ, զոր վարչապետը չը նուազեցնելը կը վստահեցնէր: (Միջախառնութիւններ ձախ կողմը):

Արտաքին Պառ. Պ. Տէլքաւէի կողմէ այս բեմը բերուած լուստես տեղեկութեանց հակառակ. Թրանսան հասած վկայութեանց ամբողջութիւնը մը կացապտուցանէ թէ 1900 ու 1901 տարիներու ընթացքին մէջ, Հայաստանի բոլոր կէտերուն վրայ, զփաղգներ ինկան մերթ թուրքերու, մերթ թուրքերու հառաւանդներու առջ, որոնք իշխանութեանց հաճութեամբ կը թաղեն: Երբ թուրքերու կրօնական փոյթը կամ քիւրախութիւնը ընդարձակութիւնը ընդհին, իշխանութիւնները Հայերը որսալու նախաձեռնարկ կ'ընէին:

Արտաքին գործերու Պ. Նախարարը մեզ ըսաւ թէ Հայերը ենթարկուած էին այնպիսի վարժութեան որոնք անոնց եթէ ոչ ապրելու, գէթ առաջիկայը կարգիլն, ու կաւեցնէր. «Ենթահանգր անապահովութեան աւելի մասնաւոր կերպով կը ստաւապին, ու ստեղծ ռեպրոդուկտիւն, որոնց զոհ կ'ըլլան, ստեղծ անպատեթիւնը ենթարկել կուտայ թէ առանց զրգուանքի անոնք կը գիտուն»:

Ձեզ պիտի ցուցնեմ, պարոններ, թէ արտաքին գործերու Պ. Նախարարին տուած տեղեկութիւնները անկատար են:

Իսպախ, մասնաւոր սպանութեանց չէ որ Հայերը կենթարկուին: 900 ու 1901ին նոյն կացութեան մէջ գործուեցան, ինչ որ էին 1892-1893ին, հետեւող մեծ կոտորածներու վաղու դայիւն: Ու ամէն բան կարծել կուտայ թէ Սուլթանը, քաղաքակրթութեան դէմ այս ոճիւրներու ուղղակի ու պահապանատու հեղինակը, իր բնաջնջումի ծրագրերը չը լքեց:

Ուր կը վերջանայ անհատական սպանութիւնը եւ ուր կ'սկսի կոտորածը: Թղթապանակի մէջ թղթակցութեանց ամբողջ շարք մը ամփոփած եմ:

Մ. Շատ Պէտրոս. — Հայկական կոտորածներուն դէմ կը բողոքէք ու Շատ լոյսի կոտորածներու դէմ չը բողոքեցիք: (աղմուկ):

Մ. Կիւսպալ Ռուսէյ. — Խորհրդարանը պիտի հասկնայ թէ այս տեսակ խմբագրումի մը պատասխանատուն չեմ: (Շատ լաւ, շատ լաւ! Դախակողմէն):

«Մուշի գաղտնալարը, կըսէր Մ. Տէլքաւէի, վախճուած կոտորածները տեղի չունեցան: Ան առաւելն անհատական քանի մը սպանութիւններու գուռ ունեցանք» Արդ, անա ինչ որ կը կաղաւթ նախակի մը մէջ որ հասած է իմ թանկագին աշխատանքին Մ. Բիւս Դիյառի, որ թրքական գործերու վրայ իր փոփոխութիւնը Հայերու պաշտպանութեանը կը նուիրէ: «Բրո Արմենիա», 14 սեպտեմբեր. — Սիրական գաւառ, ինձ կը գրես թէ Նախկինը յուզեցնեմ ու քեզ չափազանց կը տխրեցնեն: Բայց, սիրական, ինչ ընեմ, որոն հետ ողբում մեր Երկրին տառապանքները: Կրնամ միթէ լուր ու զուգիս հետ թախմաք չը բաժնել: . . . Քեզ ամեն բան կը պատմեմ, օրը օրին, որպէս զի սիրտս զովանայ: Հաղիւ ամիս մը կայ որ Մուշ արիւնի մէջ լողաց: Հայկական գիւղերը կոխկրկնուեցան: Քեզ չեմ կրնար պատմել կոյսերուն ու կիններուն սպասած «Երեսն վարուեմ»: Գալով գոհերուն, անա անոնց թիւը, Արաքի մէջ 10 անձ, Հաւաստիկի մէջ, 4. Կոնստանդինոպոլի մէջ 10. Հոնայի մէջ 11, Բերդաշի մէջ 2, Ալվարինի մէջ 6. Աքաւաթի մէջ 4. Ծիրանի մէջ 2. Կոնստանդինոպոլի մէջ 30. Մոկուսի մէջ 20. ամենքը 106 անձ: Վերադարձ գրեցեր աւերուած են: Եղբեր ոչ անուր, ոչ ճանդերձաք ունին: Դիւրաւոր ամեն բան տարին . . . »

ՀԱՐԱՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՍԱԳԻՐՔ
(Շարունակելի)

“ԴԻՅԱՋՆՈՐԵՆ”

Պր. Եւրմանեան իր այս անուն գրքի մէջ կը գտնուի մեզ այն ուղին, ուսկից անվախ ընթացան Ժիրայր, Պէսո, Փարսան, Գնունի, Արաւելան, Սերոբ ու Դեմեան:

Եւ դեռ անոնք որք գիտակցորէն ազատութեան կոլը կ'առնեցան, մանաւանդ ու գիտ կապին, իսկ շատեր վերջապէս թեան քաղաքին միշտ չափաւորով. — Յոյսին ճանքան կանուանէ այդ ուղին, ու անոր վերջածայրը կը գտնուի Աստուածացումը . . .

Մեռնողներուն յիշատակը կ'օրհնէ հոս, լսեցէք:

«Ուրեմն փառք եւ օրհնութիւն Ձեզի:

«Դեռ մեր կուրքերը մարմարեղէն ու մեր սուրբերը պայծառ, գո՛ւք հսկաներ, զո՛ւք Աստուծոյնցը, զո՛ւք Ահաւորները բոլոր, փա՛ռք եւ օրհնութիւն ձեզի»:

Նորէն ու նորէն անոնց յիշատակը օրհնելն չը գաղբիր, ծնրալիր անոնց հողին առջեւ, ու աչքերը աղօթքով լեցուն, վերջապէս անոնցմէ կը բաժնուի աւետիլով:

Ձեր բազմակները ձեր ընդլզումի զարկներուն բազմակներն են այսուհետեւ, ու ձեր հաւատքը մոլորեմու-

Թիւնն է անոնց՝ որ մոխրակոյտերու
ու գիւղի մինչեւ աստղերը բոլորու-
րումնեքն խնայ՝ զո՞ճ, սա՞ չորս
կողի բոլոր աստղերնեքն, բլուր-
նեքն ու աստղերնեքն վեր, ձեր
Աստուածացունքն օրհնեցէ՛լով փոթի
կատօրէն պիտի երթնարնէ, ահա ա-
սի՛կ, ո՛վ գիւղէ, գէպի որ յաղթա-
նակները կամ գէպի որ պարտութիւն-
ներն փառաւոր...»

Կանգ կանգնեմ այս փերջին փոթի
տողին առջեւ, որ իր մէջ ամբողջ յե-
ղափոխականի արշաւանքը իր պատ-
կերացնէ։

Այդ անձնուէր Հայրենիքի զինուորը
իր երկվորին վրայ նստած գիւղացի-
քէն կընթանայ յոյսի ուղիքէն, ա՛նձ
գիւղէ գէպի որ յաղթանակները կամ
գէպի որ պարտութիւնները փառա-
ւոր...»

Ի՞նչ ուղուոր դաս անոնց՝ որոնք ու-
ղարտել կուզեն ճշմարիտ յեղափոխա-
կանի Ս. յիշատակը, որ գէպի ան-
ձանթ յաղթանակը երկվորած ա-
ստն, գիւղացիներն ինկան «փառա-
ւոր պարտութիւնով» մը։

Պ. Եւրոպականի գրքոյից մեզի բո-
լորովին չոր է իր ոճով, վառ՝ իր
զգացողմանով։ Եւ զայն սիրեցի, ու-
րովհետեւ «Յոյսի ճամբան» զոյց կու-
տայ եւ մեր դարերու ամենէ ահաւոր
գործուած ոճիւրին, եղանին վրէժը
կաղաղակէ՛ք քան կերպէ։

Եւ ո՞վ չունի մաս այդ բոլորացած
վրէժէն, լուծելու համար զայն զի-
ցաղնօրէն ինչպէս որ ալ ըլլայ։

Պ. Ատոմ Եւրոպական քայլերը կը
նետէ իր առջեւ գծուած ուղիին մէջ։—
գիւղէ թէ՛ իր այս աշխատութեան
ջանքերը պիտի չը խրախուսուին նիւ-
թապէս։ Եւրոպականի իր գրքոյից,
արտասանմանի ազատ գրականութեան
քաղաքի իր լուծման նետելու, ինչ-
պէս շարունակ միեւնոյնը կրնան իր
ընկերները Բարիքի եւ կամ արտա-
սանմանի այլ սղագին քաղաքներու
մէջ համեմատութեան կեանքը ապրելով
օրը օրին, եւ ասանց նիւթական
վաղը մտածելու, խնայողութեան գու-
մարովին կը գրեն գիրքեր, կը սպին
թերթեր, դադարաւոր կուրը կը մղեն,
ճշմարտութեան սիրտն ընկեր ընկերի
դէմ պատուոյ դատը կը պաշտպանեն,
կը տառապին, կը նկզուին, լոկ ընկ-
նուած Հայաստանի մը սիրտն, եւ
կրնան այս ամենը կանխապէս վստահ
ըլլալով որ ծախսածնին պիտի չը դան-
ձին երբեք եւ կամ ծախսուած գիրքի
մը ստակն «մանանայի պէս երկինքէն
պիտի իջնայ» ամբողջութեամբ մէջ։— Պ.
Եւրոպականէն առաջ Պ. Վահան Թէ-
քեան «Համալսարանի» տպարանէն
հրատարակ հանեց իր հոգեւրը, իր
աղբիւրի հոգեւրը, ո՞վ չուզէր ունե-
նալ ատանկ հոգեւր...»

Համալսարանի տպարան, «Անա-
հիտ» տպարան, «Բանասէր» տպա-
րան, տպարան «Տիգրան» եւն, «Ի-
րաւունք» տպարան, «Փարոս» տպա-
րան։ Արտասանման վեհաժողովի մը
կերպարանքն ստանալու ճամբուն մէջ
է։ Արտասանմանը երբ միտքարական
միակ կէտ իր գրական աշխատաւոր-
ներ միայն ունի, որոնք կը գրեն,
կը վիճարանին, կը կուրին գիւղազ-
նօրէն (խօսքս անոնց է, որոնք գի-
տակցօրէն նուիրուած են Ս. Գործին.
— գրականութիւն կընեն եւ, կամ
Հայրենիքի դործով կը տառապին)։
Այո՛, կան նաեւ որ լկտիօրէն իրա-
րու երես կը նետեն նորագործան կեղ-
տառութիւններ։— ահա մէկ քանի
նմոյշը այդ բաւերուն։— մեզնեք,
յորմուսի, կոկիլակի, եւ այլն։

Եւ կը հաւատամ թէ՛ արտասանմա-
նի գրող եւ գործող երկուստեքն

շատերու գործունէութիւնն անկեղծ
է, եւ ժամանակավիշիւ գրական եւ
յեղափոխական հրատարակը պիտի
ստանայ իր վերջնական նօտիւնը վի-
ճակը, ինչպէս անոնուած է ամեն
բանի սկզբնական շրջին։— Եւ ան-
այն հեղեղին՝ որ լեռներէն վարկիջ-
նէ իր առջեւէն քշելով՝ ամեն ազատ-
առութիւններն, տ հետգնեալ կը հան-
գաւորի այն, կը կանոնաւորուի, եւ
այդ աւերող հոսանքի օգտակար բա-
ժանումներն կերթան կոռուքն բեղմ-
նալից զաշտերը։

Գայթակղութեան խնձորը գործող-
ներ իրենց գարշիլ յաջողութեան կա-
տարն են հիմա, սեանելով որ յուր-
քանչիւր արժանիք ունեցողներ իրա-
րու դէմ հանած են, ու իրենք հիւ-
ռէն հանգիստեալ կըլլան։— անոնց
միտքիւն, անոնց կարայրակցութիւնը
իրենց զատապարտութիւն պիտի ըլ-
լայ։— Բարիք, Եղիպատս, Ամերի-
կա, Պաւլարիա ազատ գոտաւորի
կեդրոններ եւ դարձած հիմնական ար-
կաւ եւ անաւագ կարծուած ժողովուր-
դի հարազատ զաւակներու զիջող-
նայան անձնու իրութիւնովը, գոհա-
բէրութիւնովը։— անոնք կրնան ձրի
գրականութիւնը հիմա։— ամօ՛թ ա-
նոնց որոնք գրականութեան աշխա-
տաւորները չեն ուզեր վարձատրել զա-
նազան անհիմն եւ ճղճիմ պատուակ-
ներով։ ամօ՛թ անոնց, որք ձրի
թերթ եւ գիրք կարդալ կուզեն, ա-
մօ՛թ անոնց մանաւանդ, որոնք գը-
րականութիւնով ապրողի դէմքին
մտաւայնակ բառը կը նետեն։ (միթէ
օրով պիտի ապրէին անոնք) ո՞վ հը-
րաշք, ո՞վ զարմանալիք...»

Հին օրերու մէջ Եւրոպայի այս ու
այն կողմ հաստատուած ապարանե-
րու թուականներն ոսկի տառերով
քանդակուած են պատմութեան մէջ։
Եւ ամենէ երջանիկ թուականը չէ՞
գրականութեան համար մեր այսօրուայ
թուականը՝ ունենալով բազմաթիւ
ապարաններ որք ազատ գրականու-
թիւնը կընեն սղագին կեդրոններու
մէջ, եւ այն ալ հաստատուած մաս-
նաւորներու անհատական ջանքովը։
Ըսէ՛ք, կոտորածի վաղորդային ա-
մենէն միտքարական, զովելի, հա-
յուն պատուաբեր գործը չէ՛ այս։

Ո՞վ պիտի խրախուսէ զանոնք, եւ
ապահովէ անոնց մշտնջենական գո-
յութիւնը։

Ո՞վ, կամ ո՞ր բարեկամող գէպը
պիտի միացնէ իրարու դէմ կուռող
գրական վստակաւորներն, որոց ա-
մենքն զատ զատ իրենց անհանձնա-
յառել բարեմասնութիւններն ունին,
Ազգային շէնքի կառուցման գործին
մէջ։— մին ճարտարապետ, մին հիւան-
ուրիշ մը դարբին, քարվիւր, ջրկիւր
եւն։ Լսուած է թէ չէնք մը ճարտա-
րապետներու խմբով եւեթ կառուց-
ուի։ Ամեն նկատումներէ վեր, կու-
սակցական դարձուածներէ բոլորովին
զերծ, ցաւած սրտի մը այս բաղ-
ձանքներն կարգադրելով ամեն Հայի
կողմանէ, որք պատիւ ու փառք
ունին Ս. չէնքի կառուցման գործին
մէջ, պիտի դադրին աննպատակ եւ
անամէջ վիճարանութիւններէն, եւ
իւրաքանչիւրը պիտի ճանչնայ վերջ-
նապէս իր գերը, եւ զիրքը։— Եթէ
իրենք հիմայ չուտան, բաքուն ու-
ժի մը լաւատու պիտի ըլլայ մօտիկ
ապագային։

Հմայակ Աստուր

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

— Երեւանի Ս. Գրգորի վանք-
ժողովը, անգամ Տաթ. Գ. Բարեկ-
նորապետութեան գրկած մէկ նա-
մակին մէջ յայտարարած է թէ
վերջնականապէս չի կրնար ընդու-
նիլ կրիթիկոյ կ'սթոգիկոսութիւնը։
Խառն Ժողովոյ նիստը յետաձգ-
ուած էր, մինչեւ որ Տ. Եւրա-
պական տեսակցութիւն մը ու-
նենար Երեւանի Ս. Գրգորի հետ.
այդ տեսակցութեան մէջ ալ Ս. Գր-
գորանք պ'գտած էր իր հրաժար-
կանին վրայ։ Վերջի ալ գրաւորա-
պէս նորիւ հայտարարած է։ Ս. Գր-
գորանքին վրայ խառն Ժողովոյ
վերջին նիստին մէջ ինչ որոշու-
մարիւր գեւ չէնք կրցած իմա-
նալ։ Ս. Գրգորն ընտրութեան ար-
գիւնքը Պատրիարքարանին կողմէ
պաշտօնապէս Գրգոր չէր հայտար-
արած, ընտրեալին հրաժարակա-
նին պատճառաւ։ Այժմ խնդիրը
չատ կը կնճառուի և հետեւեալը
ի՞նչ պիտի ըլլայ, չէնք գիտեր։

— Պատրիարքի հաղորդումով
մօր Տիկին Եղիպատէթ Օսմանեանի
յուզովի ստորութեան տաթիւ փա-
խան ծաղկեպսակի Ազգ. Հեւան-
դանոցին եղած նախորդաւորութիւն.
ներու գումարը 3132 զւշի հա-
ստած է։

— Զմիռնիոյ Ներսէսեան Ս. Գր-
գորանքն անցուկ վիճակին դար-
ժան մը տանելու համար խնամա-
կալութեան կոչին վրայ, Ս. Ա-
ռաշնոյ գն հաղորդակութեան ձեռ-
նարկած և քանի մը օրուան մէջ
200 ոսկի դրամ հաւաքած է յանձ-
նաժողովի մը օժանդակութեամբ։

— Կերման աղքատիկ աշակերտ
մը Հայ որբերու խղճուկ պատու-
թիւնը լսած ըլլալով, օգնութիւն
մը ընել ուզած է. և իրենց տան
բակին մէկ անկիւնը գեղարարական
մշակելով, գոյացած ալ գիւնքը,
16 ֆր. զրկած է հայ որբերուն։

— Պուգէշի Հայկական Բնութե-
ցոյցանի վարչութիւնը շնորհակա-
լութիւն կը յայտէ գերաւան Տ.
Գրգոր Յակոբեանի, որ լարե-
հաճ է իրաւաւոր մը նուիրել
այդ հաստատութեան։

— Էնուսէնի մէջ հետեւեալը կը
կարգանք.
«Ս. Գրգորի խնամք կի խնամք թէ
Տ. Տօք. Սիմոն Գալուստեան գաղ-
ղիական Ս. Գրգորեանի Ընկերու-
թեան թղթակից անդամ անուա-
նուած է։ Մեր երկտարարք և
գիտուն հայրենակիցը երկու տա-
րի առաջ Բարիք եկած էր կնո-
ջական հիւանդութեան վրայ իր
ուսումը կատարելագոյն ծելու հա-
մար։ Ներքէր հիւանդանոցին մէջ,
ուր կաշխատէր, արձակուրդ-
ներու եղանակին բոօֆէսօրի մը
պաշտօնը կը կատարէր, և միեւ-
նոյն ատեն կառավարիչն էր ծն-
դարեական դասընթացին, վեր-
ջին անգամ Ֆիլիպէ ճամբորդելու
ատենը Բարիքի մանկաբարձա-

կան ընկերութեան թղթակից ան-
դամ անուանուած է։ Տիար Տօք.
Գալուստեան այժմ կը պատրաստէ
երկու սեռի միջանցքային հիւան-
դութեանց վրայ շատ շահեկան
երկաթիւ թիւն մը։»

— Ֆրիզո (Ամերիկա)։ Նամակէ
մը կը քաղենք հետեւեալ լուրերը.
«Հայեր հոս օրըստ օրէ կը շատ-
նան. ամենքն ալ գործ ունին.
կը հաւատաւ թէ տեղիս Հայոց
ապագան խոստմանից է։ Տասը
տարի չանցած տեղին գործերուն
թիւնս մէկ երրորդը հայեր ի-
րենց ձեռք անցուցած պիտի ըլ-
լան։ Վերջիս Հայ մը 40 էլքը
այդի մը գնեց 12,000 տալի։ Ու-
րիշ հայու մը համար ալ խօսք
կայ թէ 160 էլքը գնած է 50,000
տալի։ Գարձեալ ուրիշ երկուք 160
էլքը գնեցին 5,000 տալի Ս. Գրգոր-
եան ընկերութիւնը գնեց 640 էլքը
25,600 տալի։ Գարձեալ ուրիշ մը
160 էլքը 3,200 խաբերդցիներն
ալ հարիւրներով էլքը տեղ գնեցին
որոնց անունները և մանրամաս-
նութիւնները չենք կրնար թուել։
Անցեալ տարի Հայոց ձեռքն էր չա-
միշի ամբողջ գործին մէկ վեցե-
րորդը, և անտարակոյս այս տա-
րի համեմատութիւնը աւելի պիտի
ըլլայ։»

Հայ գաղութը երթալով կը մոծ-
նայ. հիմա 300 ընտանիք կը գո-
նուի։ Այս տարուան նշանուածնե-
րու և ամուսնացածներու թիւ 25ի
կը հասնի։ Ատեն մը աղջիկ կը-
փնտռուէր և չկար, հիմա բաւա-
կան շատ աղջիկներ կան և մէկ
կողմէն ալ կը հասնին։ Եթէ այս
համեմատութիւնով աճին և գոր-
դանան Հայեր, կը խորհուի թէ
չատ չանցած ընտանիքներու թիւը
1000ի պիտի հասնի։

«Կոնկակ»

ԱԶԴ

Վառնայի աղջկանց վարժարանին
համար կարող ուսուցչուհի մը կը
փնտռուի որ կարենայ դասախօսել
Հայերէն, Ազգ. Պատմութիւն, Թուա-
րանութիւն եւ Աշխարհագրութիւն.
գոհացուցիչ ամսաթուոյ. հետեւոր
քաղաքներէն եկողին ճանապարհա-
ծախար կը վճարուի. փափաքողը գի-
ման ընդօրոյթ անձամբ կամ նամակաւ
Ազգային երկսեռ վարժարանաց հոգա-
բարձութեան։

(Կնիք)

Դիւ. խնդ. — Մատնիչ վարժապե-
տին տեղը երբ պիտի ուզուի անաղարտ
ուսուցիչ մը։

ԿԸ ՓԵՏՈՒՈՒԻ

1896ի գաղթականութեան ժամանա
կէն ի վեր անյայտացող Գալուստեան
Պ. Գալուստեանի ուր
գտնուիլը գիտող ազգայինք թող հա-
ճին խմբագրութեանս իմացնել։ Յիշ-
եալը երկայնահասակ. թիւաղէս, սեւ
պէսայ երկաթագործ մըն է, որ 3
տարի առաջ Աթէնք կը գտնուի եղեր։

